

մանակին յայն զոր զամենեւեան մանզուլ արարին եւ թագաւորն տւեալ զէնկիւէր աղասութիւնն ումեմն քան զայս բարձրագունի եւ նա ոչ առեալ յանձն, եւ սա վաղեալ եւ երկիրպագեալ թագաւորին թէ ինձ տո՛ւր, եւ թագաւորն տւեալ նորա՝ ոչ սրտիւ եւ օրհնութեամբ, այլ անիծիւք: Վասն այս բանիցս սպանեց զսա օրս՝ զայն պատճառելով, բայց լաւ մարդ էր եւ ոչ մի հայ ոչ գանեաց յաւուրս իւր: Եւ օրս զմուխ թատիպ միականին այլ սպանեաց, որ առեր էր զմանսուպն իւր հրամանաւ զօրպալիցն եւ ինքն էր փոքր զօրպա: Երեկոյիս գնացի ի Սուրբ Նիկողոս եւ անտի ի Մղտեսոնցն եւ անտի ի տուն: Եւ յառաջ քան զսպանել աղային զչուխատարն հանեալ թագաւորն վասն աղայութեան եւ նա հեծեալ ի ձի եւ գնացեալ ի դուռն:

Դչի (27 Մայիս) առաւօտուս գնացեալ իմ ի ժամ եւ անտի ի խանութ: Օրս զմիականի սուպաշին սպանեալ թագաւորն. եւ նա էր ևս զօրպա, որ Բ անգամ էառ զսուպաշութիւնն ի տարիս: Օրս Մարտիրոս վարդապետն գնաց ի Սուլումանասոր:

Դչի օր (28 Մայիս) Պաշատուր եպիսկոպոսն ի մեր ժամն եկաւ: Երեկոյիս Պաշատուր վարդապետն քարոզ ասաց. ի տեղն էի:

Եչի օր (29 Մայիս) գնացեալ իմ ի խանութ եւ ըմբռնեալ խարաճճոցն զիս՝ գնացեալ առի զթուղթն, յիւրեանց թվականին Ռիկէն էր, եւ գնացի ի խանութ: Եւ երեկոյիս գնացի ի Սուրբ Նիկողոս, եւ յետ ժամուն որ քարոզ ասաց Պաշատուր վարդապետն՝ գնացաք հետ Տէրտէրին ի դուռ Աւետիք անուն զաւուխճուն որ եկեալ էր ի Պուրսայու եւ բերեալ էր զքսուրն Հիւսէինին մեր, եւ առաք եւ բերաք ի տուն, եւ ի ճանապարհին անձրեւ մեծ եւ սաստիկ էառ կայծակամբ ահազին եւ որոտմամբ, որ մտաք հազիւ ի տուն Մըղտեսուն եւ անդ եղաք զայն, եւ պահ մի կացեալ անդ